Պարույր Սևակ

Դիմակների փոփոխություն՝ հոգուտ անդիմակության

Ե՛ս՝ հեղինակ պարականոն գրքերի
Եվ չգրված օրենքների վերծանող,
Ասում եմ ձեզ.
-Մ՛ի վախեցեք վատթարից,
Նա է լավի օժանդակը թաքնըված...
Ե՛ս՝, հոդախտով տառապողըս ողջ կյանքում,
Խոնավության բանտարկյալըս ու գերիս,
Տալիս եմ ձեզ իմ ցավըզգա ոտքերիս
Խորհուրդը խոր և հրամանն ահարկու.
-Խոնավությունն ունի ծաղիկ անարմատ,
Որ ծաղկում է ծիածանի յոթ գույնով,
Ու բորբոս են կոչում նրան աշխարհում:
Երբ բորբոսն է քարտեզ գծում մեր հացին
Կամ մեր հոգում,
Կամ երկրի մի անկյունում,
Ջո՛ւր միամիտ կրակապաշտ մի՛ դարձեք.
Արեգակը պիտի խնդա՛ ձեզ վրա,
Պիտի խնդա՛,
Ո՛չ թե հասնի ձեր կանչին:
Ուրեմն ինձ պես խոնավապա՛շտ եղեք դուք,
Դարձեք ինձ պես հավատացյա՛լ բորբոսի

Եվ ապրեցեք նրա գծած քարտեզի
Մի անկյունում, ինչպես ցավը՝ հոդի մեջ...
Ե՛ս՝ անվավեր խլիրտների թվացույց
Եվ մասնագետ հոգեհարցման,
Ես հիմա
Ասում եմ ձեզ.
-Հավատն ինչքան պակասի,
Այնքան հույսը կավելանա ձեր սրտում,
Որովհետև վստահելը՝ լավ է շատ,
Բայց չափից շատ վստահելը՝ մի աղետ,
Որ չի կախվում թշվառական մեր գլխին,
Այլ աճում է , քաղցկեղի պես, մեր ներսում...
Ե՛ս՝ նո՛ր գուշակ ըստ ստվերի և շուքի,
Ասում եմ ձեզ.
-Ստվերները կարճանում,
Ու շուքերը երկարում են... առանց մե՛զ,
Բայց մենք պիտի շուքից հյուսենք ամուր թոկ,
Բայց մենք պիտի սյուներ շինենք ստվերից՝
Սպասելով, թե ե՞րբ պիտի այդ թոկով
Ու սյուներով մի օր պիտի սարքվի կախաղան
Ստի՛ համար, որ հերաթափ գլխի պես
Չի՛ սանրվում, բայց սանրի պես շիկացած
Մեր ուղեղի գանգուրներն է հարթեցնում...
Ե՛ս՝ այդ ստի սխալների սրբագիր
Եվ ուշացող արդարության խմբագիր,
Ասում եմ ձեզ (մի՛ զարմացեք), որ իրոք
Ամենամեծ միամիտին աշխարհում
Մարդիկ Աստված կամ Արարիչ են կոչել:
Եվ ասում եմ ու հիշեցնում վերստին,
Որ աստծուն էլ այդ միամիտ,

Եվ աստծո՛ւն
Եթե երեք սուտ աղոթքով դու դիմես,
Ապա չորրորդ սուտ աղոթքով չե՞ս խաբի...
Ե՛ս,
Որ Աստծուն Աստվածատուր եմ կոչում.
Ե՛ս՝ խեռորեն խռովարար-խռովիչ,
Աստվածամերժ-աստվածարկու մի չաստված,
Ասում եմ ձեզ, երկրորդելով երրորդում,
Որ երկնքում իրո՛ք չկան աստվածներ:
Նրանք վաղուց երկրի վրա են բազմած,
Բայց ո՛չ ուղտի սապատի պես, այլ ուղտի
Անտանելի բեռի նման, որ մի օր
Ցած կնետի համբերատար ո՛ւղտն անգամ:
Խռովության սերմը, իբրև մանանեխ,
Տարածվում է արտաշնչմա՛մբ մեր բերնի,
Տարածվում է երկրից երկիր, վարակում
Մինչև անգամ աստվածներին հողեղեն,
Որ մեր հոգում ոտնագնդակ են խաղում,
Որ խրվել են մեր կոկորդում՝ իբրև խորխ,
Եվ մեր լեզվից կախ են տվել կեռերով
Անվերջ նեխո՛ղ, բայց չփտո՛ղ մի դիակ...
Խռովության սերմը, իբրև մանանեխ,
Իբրև որոմ մի փրկարար, իբրև ախտ,
Ահավասիկ և նրանց է վարակում:
Եվ ահա ե՛ս՝ մանանեխի մի պտղունց,
Մի բուռ որոմ, ախտի մանրէ մի սրվակ,
Ուզում եմ ձեզ ուրախացնել՝ ասելով.
-Երբ աստվածներն են խռովում իրարից՝
Մարդիկ իրար հասկանալ են սկսում...

17.XI.1963թ.
Երևան